Բոգդան Բ. Աթանեսյան[1]

ՇԱՌԼ ՄԻՇԵԼԻ «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ»[2]

2024 թ. մարտի 15–17-ը ՌԴ-ում անցկացվեցին նախագահական ընտրություններ, որոնց արդյունքներով պետության գործող ղեկավար Վլադիմիր Պուտինը ստացել է ձայների 87,28%-ը: ՌԴ ԿԸՀ-ի կողմից քվեարկության արդյունքների վերաբերյալ առաջին տվյալների հրապարակմանը զուգընթաց, քաղաքական և դիվանագիտական էթիկայի ընդունված ավանդույթների համաձայն, Վ. Պուտինին շնորհավորական հեռագրեր և հեռախոսազանգեր են հղել մի շարք պետությունների և միջազգային կազմակերպությունների ղեկավարներից: Ընդ որում, այս գործընթացն առանց սկանդալի չստացվեց, ինչն սպասելի էր՝ հաշվի առնելով ուկրաինական խնդրի ֆոնին Ռուսաստանի և Արևմուտքի ծայրահեղ լարված հարաբերությունները: Դեռևս 2024 թ. մարտի 15-ի առավոտյան Եվրոպայի խորհրդի նախագահ Շառլ Միշելը «X» սոցիալական ցանցում հեգնական գրառում էր հրապարակել՝ «շնորհավորելով» Պուտինին հաղթանակի առթիվ: «*Ցանկանում եմ շնորհավորել Վլադիմիր Վլադիմիրովիչ Պուտինին այսօր մեկնարկող ընտրություններում համոզիչ հաղթանակի առթիվ. ոչ մի ընդդիմություն, ոչ մի ազատություն, ոչ մի ընտրություն*», – գրել է Միշելը, դրանով իսկ ուղղակիորեն ընդգծելով, որ պետք չէ սպասել քվեարկության արդյունքներին, քանի որ Պուտինի հաղթանակն ակնհայտորեն կանխորոշված և կեղծված է նրա «*ավտորիտար վարչակարգի*» կողմից:

Այսպիսով, Շառլ Միշելի ընդգծված հեգնական մեկնաբանությունը դարձավ ՌԴ քաղաքական իշխանության վերարտադրության գործընթացի վերաբերյալ եվրոպական իսթեբլիշմենտի վերաբերմունքի յուրօրինակ ցուցիչ, որն, ըստ Մոսկվայի արևմտյան հակառակորդների, բացարձակապես հակաժողովրդավարական էր և զուրկ որևէ օրինական հիմքերից:

Թերևս նման գնահատականը կարող էր օբյեկտիվություն պահանջել, և եվրոպացի բարձրաստիճան պաշտոնյային կներվեր սարկազմը, եթե խոսքը վերաբերեր Եվրոպայի իսկապես անզիջում դիրքորոշմանը, եթե բոլոր գործընկերներն ու հակառակորդները, առանց բացառության, հետևեին ժողովրդավարության և ազատության պահանջներին:

---

[1] Հրապարակախոս, վերլուծաբան, վավերագրող ռեժիսոր: Հեղինակ է ավելի քան 1000 լրագրողական և քաղաքական-վերլուծական հոդվածների և 400 հեռուստատեսային վավերագրական տեսահոլովակների: Աշխատել է «Հ1», «ԱՐ», «Երկիր Մեդիա» հեռուստաընկերություններում: Նա համագործակցել և եղել է «Голос Армении», Aysor.am, Voskanapat, «Ազատ Արցախ» և այլ պարբերականների ու լրատվական կայքերի թղթակից:

[2] Հոդվածը բերվում է թարգմանաբար՝ ռուսերենից: Բնագիրը խմբագրություն է ներկայացվել 24.03.2024 թ.:

Հին աշխարհը, որն իրեն համարում է ժողովրդավարության հիմնադիրը և դրա հիմնական սկզբունքների ու չափանիշների օրենսդիրը, Ռուսաստանի դեպքում, անշուշտ, հիմքեր կունենար պատեռնալիստական ռևիզիոնիզմի և դատապարտման համար, եթե հավատարիմ մնար նույն մոտեցումներին «ժողովրդավարական օյկումենի» հիմքերը «խախտող այլ երկրների» նկատմամբ:

Սակայն, ինչպես տեսնում եք, եվրոպացի պաշտոնյաների համար նման օբյեկտիվությունը ոչ միշտ է պարտադիր:

Նույն պարոն Միշելը 03.08.2024 թ.-ին շնորհավորական ուղերձ էր հղել նաև նախորդ օրը Ադրբեջանում տեղի ունեցած արտահերթ նախագահական ընտրությունների առթիվ Ադրբեջանի ղեկավար Իլհամ Ալիևին, ինչի մասին չէր թերացել տեղեկացնել հասարակայնությանը «X» սոցցանցի իր էջում. *«Շնորհավորել եմ Իլհամ Ալիևին Ադրբեջանի նախագահի պաշտոնում վերընտրվելու կապակցությամբ և իր բարեմաղթանքները փոխանցել նոր մանդատի կապակցությամբ: Նրանք նաև քննարկել են Ադրբեջանի և Եվրամիության միջև հարաբերություններն ու համագործակցությունը, ներառյալ էներգետիկ հատվածը»*:

Ինչպես երևում է Միշելի գրառումից, այստեղ սարկազմի ոչ մի նոտա չկա, իսկ Ալիևի հաղթանակի նկատմամբ վերաբերմունքն ամբողջությամբ լցված է անթաքույց գոհունակությամբ և նույնիսկ ուրախությամբ: Խոսքն Ալիևի մասին է, ում ընտանիքը 30 տարի ղեկավարում է Ադրբեջանը՝ որպես սեփական միապետական տիրույթ, իսկ ինքը՝ 20 տարի շարունակ իշխանության ղեկին է, ընդ որում, սահմանադրական փոփոխությունների համաձայն, հետագա ցմահ կառավարման հեռանկարով: Խոսքը եվրոպական կառույցների և ֆինանսական ու քաղաքական շրջանակների հետ կապված տասնյակ կոռուպցիոն սկանդալների մեջ ներքաշված, դարձյալ եվրոպական լրատվամիջոցների ու իրավապահ մարմինների կողմից բացահայտված քաղաքական գործչի մասին է: Խոսքը մի մարդու մասին է, ով սովի, սարսափի ու կոտորածի միջոցով արցախահայության դեմ ազգասպանություն է իրականացրել, նրանց վտարել հազարամյա հայրենիքից և այժմ նրանց նախնիների հողում մշակութային ու պատմական ժառանգությունը ենթարկում է ոչնչացման: Խոսքը բռնապետի մասին է, ով, առավել քան որևէ մեկը, հրապարակավ հանդես եկավ հանրային դաշտում եվրոպական հանրության հասցեին ոչ քաղաքավարի և նույնիսկ վիրավորական հայտարարություններով՝ կեղծ ու երկերեսանի հռչակելով եվրոպական երկրների ժողովրդավարական ուղին և ազատական արժեքները:

Իսկ ինչ վերաբերում է, մասնավորապես, ընտրություններին, որոնց առթիվ պարոն Միշելը շնորհավորական ուղերձ է հղել Ալիևին, ապա, ըստ եվրոպական ամենահեղինակավոր կառույցների (ԵԽ, ԵԽԽՎ և այլն) և միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների, դրանք անցկացվել են քաղաքացիների

իրավունքների ու ազատությունների կոպիտ խախտումներով և դասական բռնապետությունների ոգուն լիովին համապատասխան: Ալիևի ռեժիմն արգելել էր նախընտրական հանրահավաքներն ու ժողովները: Նրա բոլոր «մրցակիցները», առանց բացառության, առաջադրվել էին՝ որպես թեկնածուներ իշխանամետ կուսակցություններից ու շրջանակներից: Երկրում տիրող իրավիճակի վերաբերյալ նրանց գնահատականներում բացարձակապես բացակայում էին իշխանությունների քննադատությունը, իսկ լրատվական դաշտում՝ բանավեճերի ձևաչափը: Ընդդիմադիր քաղաքական գործիչներն ու լրագրողները կանխամտածված ձերբակալվել էին և շինծու մեղադրանքներով դատապարտվել ազատազրկման: Անկախ կազմակերպություններն և միջազգային կառույցները զրկվել էին ադրբեջանական ընտրություններին հետևելու իրավունքից: Ողջ հանրապետության ընտրատեղամասերում իրականացվում էին քվեաթերթիկների զանգվածային լցոնումներ, իսկ ձայների հաշվարկը թե՛ տեղում, թե՛ ԱդրՀ ԿԸՀ-ում իրականացվում էր հայտնի խախտումներով: Իշխանությունները լիովին օգտագործեցին վարչական ռեսուրսը և ընտրողների նկատմամբ ճնշումների ու ահաբեկման բոլոր հայտնի մեթոդները: Արդյունքում, Իլհամ Ալիևը, ըստ ԱդրՀ ԿԸՀ-ի 2024 թ. մարտի 11-ին հրապարակված տվյալների, ստացել է ձայների 92,12%-ը, ինչը հստակ արտացոլում է երկրում ժողովրդավարության իրական պատկերը: Ճշմարտությունն այն է, որ Ադրբեջանը, ի հեճուկս հռչակված ազատական արժեքների, ապրում է դաժան միջնադարյան արևելյան միապետության ավանդույթներին համապատասխան, որոնցում ընտրությունները ծառայում են միայն՝ որպես «քաղաքակիրթ աշխարհի» դիմաց դեմքը փրկելու ձևական միջոց:

Եվ, ինչպես երեւում է, քաղաքակիրթ աշխարհի համար՝ ի դեմս Շառլ Միշելի, նման ձևականությունը լիովին բավարար է Բաքվի հետ գործընկերային ու բարեկամական հարաբերությունների օրինականացման տեսանկյունից: «*Այն, ինչ թույլատրելի է Յուպիտերին, թույլատրելի չէ ցուլին*», – լատիներեն հայտնի թևավոր խոսքը ճշգրտորեն համապատասխանում է եվրոպական «ժողովրդավարական արժեքների ջատագովների» կանխակալությանն ու կողմնակալությանը: Բայց իրավիճակի անհեթեթությունը կայանում է նաև նրանում, որ այս դեպքում Յուպիտերի դերը կատարում է Ադրբեջանի նախագահը, որից Միշելի կողմից ցինիկաբար ծաղրանքի ենթարկված ռուս գործընկերը շատ հետ է մնում *«ժողովրդավարական արժեքների ու ազատությունների խախտումների»* անխտիր բոլոր ցուցանիշներով:

Այնուամենայնիվ, պարոն Միշելը դրա համար «հիմնավոր պատճառներ» ունի: Եվրախորհրդի ղեկավարը Ալիևի ընտրվելու առթիվ իր իսկ շնորհավորական նամակում ակամա կամ միտումնավոր (էական չէ) լույս սփռեց ժողովրդավարության չափանիշների նկատմամբ նրա նման ընդգծված ընտրողական վերաբերմունքի պաշտոնական պատճառի վրա: *«Մենք քննարկել ենք... էներգետիկ ոլորտը»,* - գրել է պարոն Միշելը,

դրանով իսկ հասկացնելով, որ «ադրբեջանական ժողովրդավարությունը» առաջադեմ և քաղաքակիրթ Եվրոպայի կողմից չափվում է բացառապես նավթի բարելներով և խորանարդ մետր գազով, ինչպես նաև, ըստ *օդում կախված լուրերի,* նյութական այլ օգուտների տեսքով, որոնք կոռուպցիայի, անօրինականության և մարդկության դեմ հանցագործությունների մեջ խրված Բաքվի ռեժիմը անշեղորեն շարունակում է մատակարարել իրեն: